| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 7 | Նոյեմբեր | 2019 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 7 | Նոյեմբեր | 2019 թ. |

# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 9776278708 |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | | |
|---|---|---|
| Սերիա | Համար | |
| | | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | | |
| | | |

| | Պայմանագիր | |
|---|---|---|
| | **[5] Կնքման ամսաթիվ** | **[6] Համար** |
| | 18 Հունվար, 2018 թ. | |

**[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)**

**[7.1] ՀԴՄ կտրոնի համար**

## Արտադրանք, ապրանք առաքող անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 6 9 0 2 0 8 7 / 1 |
| [10] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [11] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ — N 1570015001210100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [14] Լրացուցիչ տվյալներ | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

| | | |
|---|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 | |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ | |
| [18] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | N 900011000834 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | |
| [20] Լրացուցիչ տվյալներ | | |
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն | |
| | Լիազորագիր — Համար | |
| | Լիազորագիր — Ամսաթիվ | |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | |

**[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկ**

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ ակցիզ. հարկ | Այդ թվում՝ բնապ. վճարի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 28158719 բ/գ, | հատ | 1 | 39400 | | 39400 | | |
| Ընդամենը | | | | | | 39400 | | |

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

07/11/2019 11:18:57

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

***Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին***

« 20 » սեպտեմբերի 2019թ.

քաղ.Արթիկ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական՝ Ն.Ս.Մանանդյանս, քննարկելով թիվ 28158719 քրեական գործի նյութերը՝

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

2019 թվականի օգոստոսի 18-ին ժամը 22:50-ին ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնից ոստիկանության Արթիկի բաժին ահազանգ է ստացվել, որ <<կրծքավանդակի աջ կեսի կտրած-ծակած արյունահոսող վերք>> ախտորոշմամբ Գյումրի բժշկական կենտրոն բուժօգնության է տեղափոխվել Արթիկ քաղաքի Գայի փողոցի 14-րդ տան բնակիչ Դավիթ Մանվելի Երիցյանը:

2019 թվականի օգոստոսի 19-ին ժամը 01:20-ին Մարո Ֆրոբելի Երիցյանը ոստիկանության Արթիկի բաժնում հաղորդում է տվել, որ օգոստոսի 18-ին ժամը 22:00-ի սահմաններում Արթիկ քաղաքի Տոնականյան փողոցի 24/9 հասցեի դիմաց վիճաբանության ընթացքում որդուն՝ Դավիթ Երիցյանին դանակով հարվածել և մարմնական վնասվածք է պատճառել Արթիկ քաղաքի Գրիգոր Լուսավորիչ փողոցի 2-րդ նրբանցքի 8-րդ տան բնակիչ Հովհաննես Գևորգի Փոթոյանը:

2019 թվականի օգոստոսի 19-ին ժամը 03:15-ին Հովհաննես Գևորգի Փոթոյանը ինքնակամ ներկայացել է ոստիկանության Արթիկի բաժին, հայտնել, որ օգոստոսի 18-ին ժամը 22:00-ի սահմաններում <<Նարեկ>> խանութի դիմաց ինքն է դանակով հարվածել Դավիթ Երիցյանին և պատճառել մարմնական վնասվածք:

Համաձայն Գյումրու մոր և մանկան Ավստրիական հիվանդանոցից ստացված տեղեկանքի Դավիթ Երիցյանի մոտ ախտորոշվել է <<կրծքավանդակի աջ կեսում ծակած-կտրած արյունահոսող թափանցող վերք, պնևմո-հեմոթորաքս>>:

Դեպքի առթիվ 2019 թվականի օգոստոսի 19-ին ոստիկանության Արթիկի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 28158719 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու նպատակով ուղարկվել է Շիրակի մարզային քննչական վարչություն, կատարվում է նախաքննություն:

Քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ 2019 թվականի օգոստոսի 26-ին որոշում է կայացվել Հովհաննես Գևորգի Փոթոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանրության համար վտանգավոր արարքը մեղավորությամբ կատարելու համար որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նույն օրը առաջադրվել է մեղադրանք, ով առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչել:

Քրեական գործի նախաքննությամբ պարզվել է, որ Հովհաննես Գևորգի Փոթոյանը ,,չափավոր արտահայտված հետփսիխոտիկ ասթենիզացիա ինքնավնասումներով,, ախտորոշմամբ գտնվում է Արթիկ [illegible]

Նկատի ունենալով, որ քրեական գործով Հովհաննես Գևորգի Փոթոյանի մեղսունակության և քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքներ պարզաբանման համար անհրաժեշտ են դատահոգեբուժական բնագավառի հատուկ գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-րդ, 244-րդ, 248-րդ հոդվածների պահանջներով՝

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1.28158719 քրեական գործով նշանակել դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրան նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/մեղադրյալ Հովհաննես Գևորգի Փոթոյանը նախկինում և հանրորեն վտանգավոր արարքը կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապե՞լ է, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ է տառապել և ե՞րբվանից,

բ/եթե Հովհաննես Գևորգի Փոթոյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկե՞լ է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

գ/մեղադրյալ Հովհաննես Գևորգի Փոթոյանը ներկայումս տառապու՞մ է որևէ հոգեկան հիվանդությամբ, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞,

դ/եթե մեղադրյալ Հովհաննես Գևորգի Փոթոյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկու՞մ է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից,

ե/մեղադրյալ Հովհաննես Գևորգի Փոթոյանը մեղսունա՞կ է, սահմանափակ մեղսունակ, թե՞ անմեղսունակ,

զ/մեղադրյալ Հովհաննես Գևորգի Փոթոյանը հանրության համար վտանգ ներկայացնում է, թե ոչ, հարկադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում և հակացուցված չէ՞ արդյոք բուժումը:

է/ մեղադրյալ Հովհաննես Գևորգի Փոթոյանը, ելնելով իր հոգեկան վիճակից, կարող է մասնակցել քննչական և դատավարական գործողություններին:

3.Եթե փորձաքննության ընթացքում առաջանան հարցեր, որոնք որոշմամբ չեն առաջադրվել, սակայն դրանց պատասխանները կարող են անդրադառնալ փորձաքննության լիարժեքության վրա և կմտնեն փորձագետի իրավասության մեջ, խնդրում եմ պատասխանել նաև այդ հարցերին:

Թիվ 28158719 քրեական գործի նյութերը և մեղադրյալ Հովհաննես Գևորգի Փոթոյանը փորձագետին կներկայացվեն ըստ անհրաժեշտության:

**Պետի տեղակալ՝** Ա.Ա.Մանուկյան